

ոէին այս կողմէ(1), եւ թէ թշուառ վիճակի մը անկայունութիւնն ու յաճախակի փոփոխութիւնը, եւ չար բախտի մը ձախորդութիւնը, շատ անգամ եւ աւելի շատ անգամներ յայտնապէս ետ կը դարձնէին զանոնք իրենց նոգատակէն : Ասոր համար՝ առատ եւ անդադար աղօթքով ամենակարող Աստուծոյ գթութիւնը կը հայցենք, որպէս զի Իր ողորմած անքերովը վերէն նայի Իր հաւատարիմ ժողովրդին, — որ հետեւող է Իր ողորմութեան գործերուն, — եւ որպէս զի հեռացնէ արդելքները եւ հաճի Իր օգտակար փրկութեամբը՝ կատարել այնպէս, որ [անոր] շնորհէ պատշաճ եւ յարմար իշխանութիւն մը, եւ այսպէսով՝ անհաւատ ազգերու ամբարիշտ սրտերն այլ եւս չուրախանան հաւատացեալներու այդքան մեծ եւ այդքան երկար ճնշումովը : Տուեալ [ի . . . ի թուին . . .] :

. . .

Լեւոն իմացած էր, որ Արագոնի Պետրոս Դ թագաւորը (1336–1387) մի քանի անգամներ զիմած էր սուլթանին, բայց անհետեւանք մնացած էին անոր զիմումները, վասն զի այս գործին համար առանձին յանձնարարականներով յատուկ զեսպան մը եւ մանաւանդ ո՛ր եւ է նուէր չէր զրկած ո՛չ սուլթանին եւ ոչ հետեւորդներուն (2) : Եւ սակայն Լեւոնի համար յոյսի նշոյլներ էին ասոնք. ուստի նոր խորհուրդ մը յղացաւ եւ գործադրեց, այս անգամ իր խոստովանահայրը Յովհաննէս Դարդել քահանայն լիազօր իշխանութիւնով զրկեց Եւրոպա : Եւ որպէս զի կարեւորութիւն ընծայուի Դարդելի առաքելութեան, Լեւոն ո՛չ միայն վաւերական թղթով մը հաստատեց անոր յանձնած պաշտօնը, այլ եւ արքայական զինանշանները կրող իր սակեղէն մատանին տուաւ Դարդելի ձեռքը, աւելի՛ ուժ տալու համար անոր կատարելէք զերին :

Դարդել իր ընկերակից Անտոն քահանային հետ ճամբայ ելաւ Կահիրէէն (11 սեպտ. 1379), եւ վեց ամիս թափառելէ ետքը հասաւ Բարսելոնա (1 մարտ 1380) :

(1) Իմա՝ « Այդ նենգաւոր ազգը կոստելու ջնջելու համար : »

(2) Դարդել կրտսէ, քի Արագոնի բագաւորը « Ֆրանսուա Սակլոզա » անունով վանառական մը զրկած է սուլթանին (Եր. 166–167) : Բայց Սակլոզա աւելի ուշ, 1380 սեպտ. 3-ին, գացած է Եգիպտոս, ինչպէս պիտի տեսնենք Պետրոս Դ-ի նամակին մէջ : Յայտնի կերէի, քի Դարդել շփոթած է անճանարուքիւններն ու դեպքերը :